Ռուսաստանի Դաշնության Պետդումայի պատգամավոր Կոնստանտին Զատուլինը գրել է. «Ադրբեջանը զենք է գնում Թուրքիայից և Պակիստանից, և հարց է առաջանում, թե ինչո՞ւ են հայերը զինվում, ինչո՞ւ է Ռուսաստանը զենք մատակարարում Հայաստանին: Անհրաժեշտ եմ համարում նշել, որ Ադրբեջանի վերջին գործողություններն ուղղված են Ռուսաստանի Դաշնության դեմ: Ադրբեջանը նույնիսկ չի ստորագրել ռուս խաղաղապահների մանդատը: Ադրբեջանն իր սադրանքներով փորձում է Ռուսաստանը ներգրավել ցանկացած միջադեպի մեջ, այնուհետև կասկածի տակ դնել խաղաղապահների ներկայությունը: Ռուսաստանը, Իրանը և Հայաստանը պետք է միասին գտնեն մեթոդներ, որպեսզի Ադրբեջանին «տեղը դնեն»»:

Հինգշաբթի
9 սեպտեմբերի 2021թ.
№ 18 (560)

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:
ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru

ISSN 1829-3468

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

Ինչ է կատարվում Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի 12.4 տոկոսի բաժնետեր «Զանգեզուր մայնինգ» ընկերությունը, որի վերջնական սեփականատերը Ռուսաստանի առողջապահության ու սոցիալական զարգացման նախկին նախարար Միխայիլ Զուրաբովն է, դատական չորս հայց է ներկայացրել կոմբինատի ու նրա մյուս բաժնետիրոջ դեմ:

Հայցերից երկուսով Զուրաբովը պահանջում է համապատասխան առքուվաճառքի գործարքը, որով «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն հետ է գնել կոմբինատի բաժնետոմսերի շուրջ 75 տոկոսը, անվավեր ճանաչել, իսկ մյուս երկուսը վերաբերում են նախապատվության իրավունքով այդ բաժնետոմսերը ձեռք բերելուն:

«Զանգեզուր մայնինգի» շահերը դատարանում հուլիսից ներկայացնում է «Կոնցեռն դիալոգ» ընկերությունը, մասնավորապես՝ փաստաբաններ Արամ Օրբելյանն ու Նարինե Բեգլարյանը: Միխայիլ Զուրաբովը պղնձա-

Շարունակությունը՝ էջ 3

«Մամ, բա մեր պապան ե՞րբ է գալու», - ասում է զոհվածի երեքամյա որդին՝ Տաշտունում հուշաքարը բացելու արարողության ժամանակ

Ստեղրիի տարածաշրջանի Տաշտուն գյուղում հավերժացրին 44-օրյա պատերազմում նահատակված 22 մեղրեցիների հիշատակը: Նախաձեռնության հեղինակը տաշտունցի Էդիկ Մինասյանն է՝ եղբայրների հետ, որն իրականություն է դարձել քարագործ վարպետ Կարեն Սահակյանի ջանքերով:

Տարիներ առաջ, գյուղ չհասած՝ Տաք աղբյուր անվանյալ վայրում, Էդիկն անմահացրել էր հոր հիշատակը՝ խաչքար-աղբյուրով: Արցախյան 3-րդ պատերազմից հետո որոշեց զոհված մեղրեցիների հիշատակը հավերժացնել հուշաքար-կոթողով: Այդ գործը գլուխ բերելու համար իրենց նպաստը բերեցին որոշ նախանձախնդիր մարդիկ:

Օգոստոսի 29-ին՝ կեսօրին մոտ, Տաք աղբյուր կոչվող վայրում մարդաշատ էր, մարդիկ այդտեղ էին գալիս ծաղիկներով... Հավաքվել էին 44-օրյա պատերազմում զոհվածների հարազատները, տարբեր վայրերում բնակվող տաշտունցիներ, մոտակա գյուղերի բնակիչներ, Արցախյան 3-րդ պատերազմի մասնակիցներ, տարբեր տարիքի և զբաղմունքի մարդիկ: Հավաքվածների մեջ տեսնում ենք

Շարունակությունը՝ էջ 8

Հայրենիքը պիտ սիրել անկախ իր քաղաքական ռեժիմից, ինչպես և անկախ մեր քաղաքական համոզումներից:

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ

«Զանգեզուրի միջանցքը» շարունակում է մնալ Ադրբեջանի երազանքը

Եվ քանի դեռ ադրբեջանցի օկուպանտները Սև լճում են, Իլհամ Ալիևը չի թաքցնում Զանգեզուրը զավթելու իր պլանները: *«Արևմտյան Զանգեզուրը ներկայումս գտնվում է Հայաստանի վերահսկողության տակ: Բայց Զանգեզուրի միջանցքը բացելու արդյունքում մենք, անշուշտ, կօգտագործենք այն՝ մեր քաղաքացիներին իրենց նախնիների երկիր վերադարձնելու համար»,* – այս մասին Քարվաճառի և Քաշաթաղի շրջաններ այցի ընթացքում ասել է Ադրբեջանի նախագահը:

«Այդպիսի պլաններ կան, և դա բնական է: Քանի որ մեր քաղաքացիները բռնի ուժով վտարվել են ոչ միայն Զանգեզուրի շրջանից, այլև Գեյչայից (Սևան): Նրանք իրավունք ունեն ապրելու իրենց նախնիների հողում: Մենք դա թողել ենք հաջորդ էտապում», – ասել է նա:

Այն դպրոցներում, որտեղ ուսուցչի պակաս կար, այդ առարկաները կկարողանան դասավանդել էլեկտրոնային եղանակով

Այս սեպտեմբերից այն դպրոցները, որտեղ առարկայական ուսուցչի պակաս կար, այդ առարկաները կկարողանան դասավանդել էլեկտրոնային եղանակով՝ մենթոր դպրոցների միջոցով: Այս մասին հայտնում է ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանը:

«Հիշեցնեմ, որ նախորդ տարի ուսուցչի պակաս ունեցող 101 դպրոցներում էլեկտրոնային ուսուցման համար անհրաժեշտ սարքավորումներով հագեցված դասասենյակներ ստեղծվեցին:

Այս տարի ընտրվեցին 18 մենթոր դպրոցներ, որոնց ուսուցիչները պետք է դասավանդեն ուսուցչի պակաս ունեցող դպրոցներում՝ էլեկտրոնային եղանակով:

Այժմ Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնն իրականացնում է 18 դպրոցների վերապատրաստումներ:

Սեպտեմբերից մենթոր դպրոցները կիրականացնեն անհրաժեշտ առարկաների էլեկտրոնային դասավանդումն այն երեխաների համար, որ հակառակ պարագայում զրկված կլինեին տվյալ առարկան սովորելու հնարավորությունից:

Սա ևս մեկ միջոց է՝ կրթության հասանելիությունն ապահովելու:

Հիշեցնեմ նաև, որ գործում է սահմանամերձ և բարձրլեռնային համայնքներ ուսուցիչների գործուղման էլեկտրոնային շտեմարանը՝ kadrer.emis.am հասցեով, 196 թափուր հաստիք է ներկայացված այս պահին: Սիրելի՛ մանկավարժներ, դիմե՛ք, համալրե՛ք թափուր հաստիքները», – գրել է Անդրեասյանը:

2021թ. նոյեմբերի 14-ին Կապան համայնքում տեղի կունենան ավագանու արտահերթ ընտրություն



Սյունիքի և Կալիֆորնիայի միջև քույր հարաբերությունների հաստատման մասին

Կալիֆորնիայի վեհաժողովի անդամ Քրիս Հոլդենը բանաձև է ներկայացրել Հայաստանի Սյունիքի մարզի և Կալիֆորնիա նահանգի միջև քույր հարաբերությունների հաստատման մասին:

Բանաձևը հայտարարում է Կալիֆորնիայի համերաշխությունը Սյունիքի հետ և կխրախուսի ու կնպաստի փոխշահավետ կրթական, տնտեսական և մշակութային փոխանակումներին:

Բանաձևի համահեղինակներից է նաև վեհաժողովի անդամ Ադրին Նազարյանը:

«Հազարավոր տարիներ շարունակ Սյունիքը պատմամշակութային խոր նշանակություն է ունեցել Հայաստանի և աշխարհի համար: Սյունիքի հետ մեր հարաբերությունների ամրապնդումը գալիս է օրհասական պահին, քանի որ Ադրբեջանի և Թուրքիայի նման տարածաշրջանային ուժերը վտանգ են ներկայացնում նրա գոյության համար», – ասել է Քրիս Հոլդենը:

Նշվում է, որ Սյունիքը Հայաստանի հին թագավորության գավառներից է և ներկայումս սահմանակից է Արցախին, Ադրբեջանին և Իրանին: Սյունիքում է գտնվում հայկական Սթոունհենջը՝ Քարահունջը, որը սկիզբ է առնում բրոնզի դարաշրջանից, Ուղտասար լեռան ժայռապատկերները, որոնք 7000 տարեկան են, 9-րդ դարի Տաթևի վանքը, որը ծառայել է որպես դպրոցական և հոգևոր գործունեության կենտրոն: Մարզի ամենաբնակեցված քաղաքը նրա մայրաքաղաքն է՝ Կապանը՝ 43,000 բնակչով:

«Լեռնային Ղարաբաղի հանրապետության հայերի դեմ Ադրբեջանի վերսկսված պատերազմից հետո ադրբեջանական զինուժը մտել է Հայաստանի Հանրապետություն և 3,5 կիլոմետր շարժվել դեպի Սյունիք՝ մասամբ գրավելով Սև լիճը: Հաջորդ օրն ադրբեջանական զինուժը խախտել է սահմանի երկու այլ հատվածներ և գրավել Հայաստանի ավելի շատ տարածքներ: Ադրբեջանի անօրինական ներկայությունը մնում է Սյունիքում՝ սպառնալով Հայաստանի ինքնիշխանությանը և այնտեղ ապրող մարդկանց», – ասվում է վեհաժողովի անդամ Քրիս Հոլդենի էջում:

18.08.2021

ՀՀ վաստակավոր շինարարի կոչում՝ Ազատ Գասպարյանին. շնորհավորում ենք

ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանի սեպտեմբերի 1-ի ՆՀ-251-Ա հրամանագրով, շինարարության բնագավառում ունեցած նշանակալի վաստակի համար, «Մեղրու ճանապարհաշինարարական և շահագործման ձեռնարկություն» ՍՊԸ տնօրեն Ազատ Գասպարյանին շնորհվել է ՀՀ վաստակավոր շինարարի պատվավոր կոչում:

Գնաճը ահագնանում է

Arlis.am կայքում ներկայացված է ազգային վիճակագրական ծառայության կողմից Հայաստանի Հանրապետության 1 բնակչի 1 օրում/ամսում/տարում/ սպառած մթերքների նվազագույն զամբյուղը:

Նշված է, թե մեկ մարդը միջինում որքան հաց, ձու, շաքարավազ, կաթնամթերք, ընդեղեն, ձավարեղեն, ձեթ, մսեղեն, բանջարեղեն ու միրգ է օգտագործում:

Միայն կայքում նշված մթերքների գներն ուսումնասիրելու և գնաճի իրական չափի վերաբերյալ իրական թվերը տեսնելու համար շրջեցինք Կապանի խանութներում ու սուպերմարկետներում:

Նշված ապրանքների միջին ամսական գինը, հաշվարկված մեկ անձի համար, անցած տարի կազմել է 34000 դրամ, այս տարի նույն մթերքը նույն քանակով ձեռք բերելու համար գնորդը ստիպված կլինի վճարել 9480 դրամ ավելի: Նշենք, որ այս հաշվարկում ներառված չեն հագուստի, հիգիենիկ պարագաների, կոմունալ վճարումների, տրանսպորտի ու դեղերի գները:

Կարելի է գտնել նաև նվազագույն ծախսերի ընդհանուր հաշվարկը՝ 61000 դրամ: Այսինքն՝ նվազագույն աշխատավարձ ստացող անձը, 2020 թ. կարող էր աշխատավարձից կատարել բազային գնումները գոնե միայն իր համար:

2021 թ., եթե մյուս ապրանքների մասով գնաճը չհաշվենք, եթե համարենք, որ մինիմալ աշխատավարձով ապրող անձը, միայն իր համար է գնումներ կատարելու, ապա կստանանք այսպիսի պատկեր՝ 68000 դրամ նվազագույն աշխատավարձ ստացող անձն անցած տարվա 61000 դրամի համեմատ այս տարի պիտի կատարի ամսական 9480 դրամով ավելի ծախս, որը կազմում է 70480 դրամ՝ 2480 դրամով գերազանցելով նվազագույն աշխատավարձը:

Սուպերմարկետում գնումներ կատարող տիկին Սվետային հարցնում եմ.

– Ձեր եկամուտներն ավելացե՞լ են վերջին մեկ տարում:

Դառը ժպտում է ու երկար պատմում արտագնա աշխատանքի մեկնած որդու անհաջողությունների, իր, երկարամյա աշխատանքից հետո ծաղր թվացող, 54000 դրամ թոշակի, պարտքերի ու այն մասին, որ նոր չէ՝ շուրջ 25 տարի ինքն ու հայրենակիցներն ապրում են՝ ապրելը մեռնելուց ծանր է բանաձևի ցավալի գիտակցումով:

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ ԲԱԴԱԼՅԱՆ

Նորոգ մանկապարտեզը վերստին բացեց դռները

Գիտելիքի և դպրության օրը մարզկենտրոնում կազմակերպված միջոցառումներից առանձնացավ մեկը՝ վերստին դռները բացեց Կապանի թիվ 8 նախադպրոցական ուսումնական հաստատությունը՝ հիմնանորոգված և նոր շունչ ստացած:

Երկար սպասված իրադարձությանը մասնակցում էին Սյունիքի մարզպետի տեղակալ Կարո Ավանեսյանը, Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանը, «Չաարատ Կապան» ՓԲԸ գլխավոր տնօրեն Դավիթ Թովմասյանը, մարզպետարանի և համայնքապետարանի կրթության և մշակույթի ոլորտի պատասխանատուներ, Կապանի նուռ-երի տնօրեններ, հյուրեր: Տանտիրոջ իրավունքով թիվ 8 նուռ-ի տնօրեն Նունե Ջհանգիրյանը ողջունեց հյուրերին, երախտագիտություն հայտնելով բոլոր նրանց, ովքեր ձեռնարկեցին այդ շնորհակալ գործը՝ նաև հիշեցնելով, որ մանկապարտեզը հիմնադրվել է դեռևս 1965 թվականին: Ենթատեքստը հասկանալի էր. ավելի քան սպասված էր այս հիմնանորոգումը: *«Խորհրդանշական է, որ այս սեպտեմբերը մեր սաները դիմավորում են բարենորոգ, հրաշալի շենքային պայմաններում, որտեղ մատաղ սերունդը շարունակելու է դաստիարակվել հայրենասերի, հաղթողի ոգով, ամուր հավատով»,* – համոզմունք հայտնեց նուռ-ի տնօրենը:

Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանը նախ ներկաներին շնորհավորեց գիտության և դպրության օրվա առթիվ, նշեց, որ հանդիսությունը պատեհ առիթ է խոսելու Կապան համայնքում նախակրթարանների դերի և նշանակության, ինչպես նաև նրանց առջև ծառացած հիմնախնդիրների մասին: Համայնքի ղեկավարը շնորհակալություն հայտնեց հիմանորոգումն իրականություն դարձնողներին՝ հանրապետության կառավարությանը, Հայաստանի Հանրապետությունում Ճապոնիայի դեսպանատանը, «Չաարատ Կապան» ՓԲԸ ընկերությանը՝ ի դեմս տնօրեն Դավիթ Թովմասյանի, ով շատ արագ արձագանքեց մանկապարտեզը նոր գույքով համալրելու կոչին: Համոզմունք հայտնվեց, որ նախակրթարանում դաստիարակություն և կրթություն կստանան Կապանի վաղվա արժանապատիվ քաղաքացիները: Համենայն դեպս, իր հարկի տակ մանկապարտեզը կարող է ընդունել մինչև 160 երեխա:

Նորոգ մանկապարտեզի մուտքը երիզող կարմիր ժապավենը կտրելու պատիվը վերապահվեց Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանին և Նունե Ջհանգիրյանին: Այնուհետև հանդիսության մասնակիցները շրջեցին մանկապարտեզի հարկաբաժիններով, ծանոթացան մանուկների նախակրթության և դաստիարակության պայմաններին: Աչք էր շոյում, մանավանդ, նորացված գույքը: Հետո դահլիճում գրական-երաժշտական համադրույթով հանդես եկան մանկապարտեզի սաները, երգերի կատարումով՝ աշխատակիցները: Փոքրիկների երգն ու պարն անտարբեր չթողեց ոչ մեկին: Ամենավերջում Նունե Ջհանգիրյանը համայնքի ղեկավարին խորհրդանշական նվեր հանձնեց, որից հետո շնորհավորանքները և անկեղծ զրույցը շարունակվեցին աղանդերի սեղանի շուրջ:

Հիմանորոգումը կատարվել է Կապան համայնքում իրականացվող սուբվենցիոն ծրագրի շրջանակում, աշխատանքներն իրականացրել է «Նորոգշին» ՍՊ ընկերությունը (տնօրեն՝ Ռազմիկ Փարսյան), որակի տեխնիկական հսկողությունը՝ «Սամալիա» ՍՊԸ-ն:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Սյունիքում մեկնարկել է արոտների ջրարբիացման համակարգերի կառուցման աշխատանքը

Սյունիքի մարզի 7 բնակավայրում մեկնարկել է արոտների ջրարբիացման համակարգերի կառուցման աշխատանքը:

Շուրջ 7,1 կմ ջրագծի, 9 խմոցի, 2 փարախի և հովվի 4 տնակի կառուցման համար կառավարությունը հատկացրել է 112 մլն դրամ:

Արման Խոջոյան *(ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ)* - Այսօր Սյունիքի մարզում ականատես եղանք, թե ինչպես են նմանատիպ կառույցները նպաստում, որ արոտները դառնան օգտագործելի: Դա մի քանի խնդիր է լուծում՝ օգտագործման տարածքների, չդեգրադացնելու տարածքները՝ չօգտագործելի լինելու պատճառով:

Տոլորս բնակավայրի վարչական ղեկավարը նշում է՝ նոր ջրախմոցներն անհամեմատ կթեթևացնեն գյուղացու առօրյա հոգսը:

Մարատ Առաքելյան *(Տոլորս բնակավայրի վարչական ղեկավար)* - Ջրախմոցների առավելությունն այն է, որ կեսօրին անասունը ջուր է խմում, նորից գնում է արոտի, կաթնատվությունն է բարձրանում, երեկոյան ժամին նորից անասունը ջուրը վերցնում, իջնում է գյուղ: Ջրախմոցի հիմնական նպատակն այն է, որ կաթնատվությունը բարձրանում է, եկամուտներն է շատանում գյուղացիների:

Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագրով մի շարք այլ աշխատանքներ ևս կատարվում են: Դեռ ապրիլին՝ Բալաք, Շինուհայր և Շուռնուխ համայնքների «Արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվներին տրամադրվել է 3 տրակտոր, իսկ աշնանը՝ մարզի Շաղատ, Շուռնուխ, Անգեղակոթ և Նժդեհ համայնքների կոոպերատիվներին կտրամադրվի 7 գյուղտեխնիկա, այդ թվում՝ 1 տրակտոր և 1 բեռնատար ավտոմեքենա:

Արման Խոջոյան - Սյունիքի մարզում շուրջ 20 բնակավայր ընդգրկված են ծրագրում, սակայն արդարացիորեն պետք է նշել, որ միայն 12-ն են, որ ակտիվ են: Ծրագրով նախատեսվում է նաև անհրաժեշտ գյուղտեխնիկայի ձեռքբերում և օգտագործում, կարծես մենք աշխատում ենք ամբողջ շղթայով:

Գյուղատնտեսական արտադրողների և վերամշակողների կարողությունների բարձրացման նպատակով Սյունիքի մարզի՝ Մեղրի, Գորիս և Սիսիան համայնքների 4 տնտեսվարողների հետ կնքվել են նաև նպատակային ֆինանսավորման պայմանագրեր՝ շուրջ 81 մլն դրամ ընդհանուր արժեքով, որից 50 մլն դրամն արդեն տրամադրվել է, իսկ մնացածը տարվա ընթացքում կտրամադրվի ջրերի արտադրության, կաթի վերամշակման և բնական հյութերի արտադրության նպատակով:

23.08.2021Թ.

ՊԵՏՐՈՍ ՂԱԶԱՐՅԱՆ. «Մեղրի համայնքում հոկտեմբերի 17-ին կայանալիք ավագանու ընտրությունը նախևառաջ մրցակցություն կլինի մեղրեցիների և ագարակցիների միջև»

Աշխատանքային այցով լինելով մարզկենտրոնից հեռու բնակավայրերում, ձգտում ենք զրույցներ ունենալ տարբեր տարիքի և զբաղմունքի մարդկանց հետ, լսել նրանց կարծիքը: Ասենք, որ շատերի տեսակետը մերօրյա զարգացումների վերաբերյալ անկեղծ է լինում: Իրենց հող ու ջրի հետ կապված մարդիկ առանձնապես սեթևեթելու կարիք բնավ չունեն...

Օգոստոսի 29-ին Տաշտունում մասնակցելով մերօրյա պատերազմի նահատակների հիշատակին նվիրված հուշաքարի բացման արարողությանը, տարբեր զրույցներ ունեցանք: Մեր զրուցակիցներից մեկը 55-ամյա Պետրոս Ղազարյանն էր՝ Կարճևան գյուղից, ով ընտանիքի հետ կիրակնօրյա հանգիստն էր անցկացնում Տաշտունի մի գեղատեսիլ անկյունում: Այնտեղ, որտեղ մերօրյա պատերազմի նահատակ Անդրանիկ Հայրապետյանի պատվին հուշաղբյուր է կառուցված:

«Այգի ունեմ, միշտ հողի հետ կապված եմ եղել, արդյունաբերությունում եմ աշխատել, կյանքում շատ եմ չարչարվել, բայց պատերազմը շատ բան փոխեց: Մեր երկիրը պիտի զարգանար, սակայն...», – չի շարունակում խոսքը, ինքնին հասկանալի է, որ մերօրյա պատերազմը նկատի ունի, ինչով էլ պայմանավորում է մարդկանց անկումային տրամադրությունը:

Պետրոս Ղազարյանին մտահոգում է նաև Մեղրիի ներքաղաքական դրությունը. *«Վիճակն այսպիսին չպիտի լիներ. Մեղրու նախկին համայնքապետն անազատության մեջ է: Ինքը համայնքի համար շատ բան է արել: Եթե բոլորը հետևեին նրա օրինակին, Մեղրին այլ վիճակ կունենար»,* – համոզված ասում է մեր զրուցակիցը և հավելում. «2008 թվականին, երբ քաղաքապետ ընտրվեց, դրանից հետո առաջընթաց եղավ Ագարակում: Նույնիսկ մեղրեցիները բարի նախանձով էին նայում ագարակցիներին»:

Հետաքրքրվեցինք, թե արդյո՞ք Մեղրիում զգացվում է հոկտեմբերի 17-ին անցկացվելիք ավագանու հերթական ընտրության շունչը: Մեր զրուցակցի համոզմամբ՝ *«Քանի դեռ ընտրարշավ չի սկսել, ստույգ բան չի կարելի ասել»: Այուս կողմից՝ ակնհայտ է, որ «Մեղրի համայնքում հոկտեմբերի 17-ին կայանալիք ավագանու ընտրությունը նախևառաջ մրցակցություն կլինի մեղրեցիների և ագարակցիների միջև»:*

Պետրոս Ղազարյանը Մեղրու գյուղական բնակավայրերի հիմնախնդիրներից առանձնացրեց ոռոգման ջրի սակավությունը:

Այնուամենայնիվ, նա համոզմունք հայտնեց, որ մեր երկիրը, նաև իր փոքր հայրենիք Մեղրին դեռ զարգանալու են. երկու որդի ունի, ովքեր մայրաքաղաքում կրթություն են ստացել, նրանց պատվիրել է Մեղրիում ապրել և շենացնել իրենց ծննդավայրը:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Առաջադրվելու եմ, ունենք նաև որոշում, թե, որ ուժով եմ առաջադրվելու.

ԿԱՊԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆԸ ՓԱԿԱԳԾԵՐ Է ԲԱՑՈՒՄ

Կառավարության որոշմամբ Սյունիքի մարզի Կապան քաղաքում նոյեմբերի 14-ին տեղի են ունենալու հերթական ընտրությունները, ինչը գործող քաղաքապետ, 44-օրյա պատերազմի ընթացքում ահռելի թիկունքային աշխատանքներ կատարած Գևորգ Փարսյանի գնահատմամբ՝ արդեն իսկ միտումնավոր խախտում է: Մասնավորապես «Իրավունքի» հետ զրույցում քաղաքապետը փաստեց.

– Կապանում, «Ընտրական օրենսգրքի» համաձայն, պետք է ավագանու անդամների լիազորությունների ավարտից հետո՝ երեքշաբաթյա ժամկետում որոշում կայացվեր արտահերթ ընտրություն անցկացնելու մասին: Որից հետո ԿԸՀ-ն պետք է որոշեր արտահերթ ընտրության անցկացման օրը, բայց կառավարությունն առաջնորդվեց ՏԻՄ օրենքով: Ըստ այդմ՝ 20-օրյա ժամկետում որոշում կայացվեց հերթական ընտրություններ անցկացնելու վերաբերյալ, որն իմ գնահատմամբ՝ իրավական առումով խախտում է: Այսինքն Կառավարությունը պետք է առաջնորդվեր «Ընտրական օրենսգրքով», այլ ոչ թե ՏԻՄ օրենքով, քանի «Ընտրական օրենսգիրքը» շատ ավելի բարձրագույն իրավական ուժ ունի, քան ՏԻՄ օրենքը:

– Այստեղ միտում տեսնո՞ւմ եք, պարոն Փարսյան:

– Իհարկե տեսնում եմ, արտահերթ ընտրությունը պետք է նշանակվեր հոկտեմբերի 17-ին, բացի այդ էլ արտահերթ ընտրությունների քարոզարշավը տևում է տասնհինգ օր: Իսկ ահա հերթական ընտրությունների քարոզարշավը տևում է 25 օր: Այսինքն՝ Կառավարությունը միտումնավոր որոշում է կայացրել հերթական ընտրություններ անցկացնելու, որպեսզի երկարատև քարոզարշավի ընթացքում իրենց ցանկալի արդյունքները գրանցեն:

– Պարոն Փարսյան, Դուք ինքներդ առաջադրվելո՞ւ եք և, եթե այո, ապա ո՞ր ուժով:

– Առաջադրվելու եմ, ունենք նաև որոշում, թե որ ուժով եմ առաջադրվելու, բայց դրա վերաբերյալ կխոսեմ առաջիկայում:

Մեր առաջնահերթ խնդիրը եղել է և մնալու է անվտանգության հարցը: Կան իհարկե նաև այլ բազմաբնույթ և բազմազան խնդիրներ, որոնց, ինչպես մինչ այս պահը, այնպես էլ հետագայում հատ առ հատ անդրադառնալու ենք:

– Պարոն Փարսյան, օգտվելով առիթից, կխնդրեինք նաև անդրադառնալ օրեր առաջ ադրբեջանցիների կողմից փակված ճանապարհատվածին: Ի՞նչ իրավիճակ է այդ հատվածում:

– Ճանապարհը բացելուց հետո որևիցե խնդիր չի արձանագրվել, մեր սահմանապահները և ռուս խաղաղապահները երաշխավորում են ճանապարհի անվտանգ երևակությունը:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ՝ ԻԼՈՆԱ ԱԶԱՐՅԱՆԻ

Ինչ է կատարվում Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում

Սկիզբը՝ էջ 1

մոլիբդենայինում բաժնեմաս ձեռք էր բերել 2020-ին՝ «Զանգեզուր մայնինգի» և Կիպրոսում գրանցված Wanlort Finance Limited ընկերության միջոցով: Հետագայում կոմբինատը գերմանական «Քրոնիմետ մայնինգից» ու մեկ այլ բաժնետեր՝ «Մաքուր երկաթի գործարանից» հետ գնեց բաժնետոմսերը՝ ունենալով 75 տոկոսի բաժնետոմսեր (41.2 միլիարդ դրամի): Ինչպես վերը նշեցինք, մյուս 12.4 տոկոսի բաժնետերը Զուրաբովն է, իսկ ևս 12.5 տոկոս պատկանում է «ԱՄՓ հոլդինգ» ընկերությանը:

«Զանգեզուր մայնինգը», բացի դատարանից ՁՊՄԿ-ի 75 տոկոսի առքուվաճառքի գործարքն անվավեր ճանաչելը, երկու նոր հայցով պահանջում է նախապատվության հիմքով իրացնել այդ բաժնետոմսերը «Զանգեզուր մայնինգին»:

«Դատարանից խնդրում ենք նախապատվության իրավունքի հիման վրա ՁՊՄԿ-ից հետ վերցնել 75 տոկոսի բաժնետոմսերն ու վաճառել «Զանգեզուր մայնինգին», – ասաց ընկերության շահերի ներկայացուցիչ Նարինե Բեգլարյանը:

Նրա խոսքով՝ թեև ներկայում կոմբինատի բաժնետոմսերի 75 տոկոսը պատկանում է հենց ՁՊՄԿ-ին, սակայն դրանք «չքվեարկող» բաժնետոմսեր են. *«Իրականում չնայած ֆիզիկապես գոյություն ունեցող բաժնետոմսեր են 75 տոկոսը, սակայն կառավարման տեսանկյունից ընկերության կառավարմանը մասնակցում են մյուս երկու բաժնետերերի բաժնետոմսերը, երբ ընկերությունը տիրապետում է ինքն իր բաժնետոմսերին, այլևս չի կարող քվեարկել»,* – նշեց Բեգլարյանը: Վերջինիս խոսքով՝ ՁՊՄ�Կ-ին պատկանող 75 տոկոսի բաժնետոմսերը, օրենսդրության համաձայն, ժամանակի ընթացքում կամ պետք է վաճառվեն մեկ այլ անձի, կամ պետք է մարվեն:

«Զանգեզուր մայնինգի» կողմից մյուս հայցը ներկայացված է «ԱՄՓ հոլդինգի», «Սթար դասթ» ՓԲԸ-ի ու նրա սեփականատերերի դեմ (տիրապետում են ՁՊՄԿ-ի բաժնետոմսերի 12.5 տոկոսը). *«Այս հայցն առնչվում է «ԱՄՓ հոլդինգ» ընկերության կողմից կոմբինատում մասնակցության անուղղակի իրացմանը, որի դեպքում, ըստ մեր պնդման, նույնպես պետք է կիրառելի լինի նախապատվության իրավունք»,* – ասաց Բեգլարյանը: Այլ կերպ ասած՝ «Զանգեզուր մայնինգը» դատարանից պահանջում է, որպեսզի կոմբինատի մյուս բաժնետեր «ԱՄՓ հոլդինգը», դրա հետ կապակցված «Սթար դասթ» ՓԲԸ-ն, 12.5 տոկոս բաժնետոմսերը վաճառելու դեպքում նախևառաջ գնման նախապատվությունը տան Զուրաբովի ընկերությանը:

Այս գործով արդեն հայցի ապահովման միջոց է ընտրվել ու արգելանք է դրվել «Սթար դասթ» ընկերության բաժնեմասի վրա:

* * *

Զանգեզուրի պնձամոլիբդենային կոմբինատի բաժնետոմսերի մի մասի վրա կալանք է դրվել: Այդ մասին տեղեկանում ենք իրավաբանական անձանց էլեկտրոնային ռեգիստրից: Ըստ այդ տվյալի՝ օգոստոսի 4-ից արգելանք է դրվել կոմբինատի 2061253 հատ բաժնետոմսերի վրա: Թե ինչ քրեական գործի շրջանակում է կիրառվել բաժնետոմսերի կալանքը, չի նշվում: Բացի այս, կալանք է դրվել պղնձամոլիբդենային կոմբինատի 12.5 տոկոսի բաժնետեր «Զանգեզուր մայնինգ» ընկերության՝ կոմբինատում ունեցած բաժնետոմսերի վրա:

Ըստ ընկերության իրական սեփականատերերի ռեգիստրի տվյալների՝ «Զանգեզուր մայնինգ»-ի բաժնետերը Ռուսաստանի առողջապահության ու սոցիալական զարգացման հարցերի նախկին նախարար Միխայիլ Զուրաբովն է, որն իր բաժեմասը ձեռք է բերել 2020-ին՝ կիպրական Walnort Finance Limited ընկերության միջոցով: «Զանգեզուր մայնինգ»-ի բաժնեմասերի վրա դրված կալանքի հիմքերի մասին ևս մանրամասներ չկան:

«Զանգեզուր մայնինգ»-ն անցյալ տարի դատական գործընթաց էր սկսել ընդդեմ կոմբինատի մյուս բաժնետերերի: Ընկերությունը պահանջում էր կոմբինատի բաժնետոմսերի առքուվաճառքի մի շարք գործարքներ անվավեր ճանաչել, իսկ որոշ գործարքներում էլ որպես գնորդ նախապատվությունն իրենց տալ: Դատարանը քննել ու մերժել էր ընկերության հայցը...

Օգոստոսի 2-ին կալանք է դրվել նաև Զանգեզուրի պնձամոլիբդենային կոմբինատին պատկանող այլ ընկերություններում ունեցած բաժնեմասերի վրա: Խոսքը մասնավորապես վերաբերում է «Լեռ-էքս» ՍՊԸ-ին, որը շահագործում էր Սյունիքի մարզի Հանքասարի պղինձ-մոլիբդենային հանքավայրը, որի հաստատված պաշարները կազմում են ավելի քան 2 միլիոն 762 հազար տոննա հանքաքար: Հանքավայրը, որի ընդերքօգտագործման իրավունքը մինչև 2030 թվականն էր, 2014-ի վերջից սկսած չի աշխատում, արդյունահանում չի իրականացնում: Վերջերս հայտնի դարձավ, որ «Լեռ-էքս»-ը սկսել է հանքավայրի փակման աշխատանքներ՝ ըստ պաշտոնական պարզաբանման հանքի աշխատանքը շահավետ չի գնահատվել:

Հուլիսի 14-ին Ազգային անվտանգության ծառայությունը խուզարկություն էր անցկացրել պղնձամոլիբդենայինում, մի քանի աշխատակիցներ բերման էին ենթարկվել:

//

ԼԵՌՆԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ. «Ես դեմ եմ, երբ դպրոցն ավարտում են 18 տարեկանում և անմիջապես բանակ մեկնում»

Հանրակրթությանն առնչվող հարցերը շարունակում են մնալ մեր ուշադրության կենտրոնում: Իհարկե, ոլորտի հիմնահարցերը բավականին շատ են և հնարավոր չէ մեկ զրույցի ընթացքում քննարկել դրանք, բայց մի մասին կփորձենք անդրադառնալ:

Զրույցի ենք հրավիրել մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լեռնիկ Պետրոսյանին:

– Պարոն Պետրոսյան, ներկայումս պատրաստվում են փոփոխություններ հանրակրթության մասին օրենքում. փոխվում է հանրակրթության պետական չափորոշիչը, ընդ որում՝ ընթացիկ ուսումնական տարում այդ չափորոշիչը կփորձարկվի մարզերից մեկում:

Տարիներ շարունակ հանրակրթության ոլորտում կատարվող՝ այսպես կոչված բարեփոխումները, ոչ միշտ են հենվել մանկավարժական հանրույթի կարծիքի վրա, ինչի հետևանքով օրենքը սպասված արդյունքը չի տվել: Գոնե հիմա կա՞ հնարավորություն, որ մանկավարժների մտահոգությունները լսելի լինեն և արտացոլվեն կատարվող փոփոխություններում:

– Նախ՝ ի՞նչ բան է չափորոշիչը: Չափորոշիչը սահմանում է կրթության նվազագույնը կամ, ինչպես ասում են, հենքը, ծրագրային առավելագույն ծավալը, որը պետք է ուսուցանվի: Սահմանում է այն որակական չափանիշները, պահանջները, որոնք նախատեսվում են կրթական յուրաքանչյուր մակարդակի շրջանավարտի համար ու նաև սահմանում գնահատման համակարգը: Ես փորձել եմ որոշակիորեն ծանոթանալ բավականին ծավալուն այդ փաստաթղթին, բայց, պետք է ասեմ, մեր մանկավարժական հանրույթը պասիվ է... Փաստաթուղթը դրված է հանրային քննարկման, և արդյունքում պետք է լինեն առաջարկություններ, դիտողություններ:

Փորձարկում... Մեկ տարվա դասավանդման փորձարկումը բավականին քիչ արդյունավետ կարող է լինել: Նույնը դասագրքերին է վերաբերում, և մենք՝ հին սերնդի ներկայացուցիչներս, հիշում ենք՝ խորհրդային տարիներին, եթե ինչ-որ բնագավառում՝ դասագիրք կլինի, նոր ուսուցման մեթոդ կլինի, փորձարկում էր կատարվում, ապա տևում էր միջինը 5-7 տարի: Եվ արդյունքն այլ էր լինում:

Այդ բոլորով հանդերձ՝ արժե ծանոթանալ առաջարկվող չափորոշչին և դիտարկումներ անել:

– Մանկավարժները հիմա կանգնած են կորոնավիրուսի դեմ պատվաստման խնդրի առաջ: Կամ պատվաստում, կամ՝ երկու շաբաթը մեկ՝ տեղեկանք թեստավորման արդյունքների մասին, ընդ որում՝ մեկ թեստավորումն արժե 12-15 հազար դրամ:

– Հարցն այստեղ երկակի է: Չմոռանանք՝ անցած ժամանակահատվածում, երբ համավարակն այնպիսի թափ էր ստացել, խուճապային տրամադրություն էր, և մի այնպիսի իրավիճակ, որը թելադրում էր ոչ ստանդարտ մոտեցումներ: Հիմա՝ ենթադրենք անհատի իրավունք ենք ոտնահարում, բայց չէ՞ որ մյուս անհատների իրավունքներն էլ ոտնահարվում են, որովհետև՝ եթե դու չես պատվաստվում, ապա դառնում ես վարակակիր մյուսների համար: Գտնում եմ՝ կրթական պրոցեսը պետք է կազմակերպել պատշաճ: Դա ենթադրում է վարակազերծում, իսկ պատվաստումը ողջամիտ ճանապարհն է:

– Մենք մի տարի առաջ ծանրագույն պատերազմ ապրեցինք, մեր լավագույն տղաներին կորցրինք...

Երբ ուսումնասիրում ենք պատերազմի ընթացքը, պարզ է դառնում, որ այն, կարելի է ասել, տեխնիկայի, սպառազինության, գիտության պատերազմ էր նախևառաջ...

Մինչդեռ մեր հանրակրթական դպրոցներում բնագիտական առարկաների դասավանդումը, մեղմ ասած, տխուր վիճակում է...

Նախ՝ ինչո՞ւ և, իհարկե, ի՞նչ անել:

– Դա շատ լուրջ հարց է, որի դրվածքը շատ կարևոր է մեզ նման երկրի համար, մանավանդ որ ունենք ռազմատեխնիկական կատարելագործման խնդիր: Մեծ ռեսուրսներ չունենք, մենք պետք է ճարտարագիտական, տեխնոլոգիական կրթությունը զարգացնենք՝ ուստի և շատ-շատ խնդիրներ լուծելու համար նոր մոտեցումներ են պետք: Ցավոք սրտի, հարցը վերջին 10 տարում, գուցե ավելի, պատշաճ լուծում չի ստացել: Դա կապված է հանգամանքից, որ շատ շրջանավարտներ չեն ընտրում այդ բնագավառը: Տեսեք՝ վերջին տարիներին շրջանավարտների մի զգալի մասը տնտեսագիտություն է ընտրում, մի մասը գնում է զուտ ծրագրավորման ուղղությամբ, մի մասն էլ՝ օտար լեզուներ է նախընտրում...

Ինչ վերաբերում է ճարտարագիտական կրթության առարկաներին՝ դրանց հանդեպ ցանկություն-հետաքրքրություն չկա: Այդ բնագավառում դասավանդելու համար պետք է մանկավարժական կոնտինգենտի խնդիրը լուծել, քանի որ դպրոցներ կան, որտեղ ստիպված են թոշակառու ուսուցիչներով կրթություն իրականացնել:

Մանկավարժական բուհերին պետք է հնարավորություն տրվի՝ այդ մասնագիտությունները դարձնելու անվճար, նաև լրացուցիչ արտոնություններ սահմանվեն՝ շրջանավարտներին գյուղական վայրեր գործուղելիս: Ունենք գյուղական դպրոցներ, որոնցում բնագիտական ժամերը կես դրույք էլ չեն կազմում:

– Ինքս պարբերաբար մասնակցում եմ զորակոչերին, զորահավաքներին: Եվ առիթ եմ ունենում զրուցել զորակոչային հանձնաժողովի անդամ-մասնագետների հետ: Մեզանում, խոստովանենք, երեխաների ֆիզիկական դաստիարակության, նախնական զինվորական կրթության վիճակը մտահոգիչ է: Ձեր դիրքորոշումը:

– Շատ լուրջ հարց է... Տեսեք, Դուք ֆիզպատրաստության հարց եք բարձրացնում, բայց դա նախևառաջ սոցիալական խնդիր է՝ ընտանիքների մի մասում ճիշտ չեն սնվում: Խնդրի լուծումը պետք է սկսել մարդկանց ընդհանուր սոցիալական իրավիճակը բարելավելով: Երկրորդը՝ դասավանդման ընթացքն է, որը պետք է վերանայվի...

– Գրեթե բոլոր դեպքերում, երբ հանդիպել և զրուցել եմ կրթության ոլորտի ներկայացուցիչների հետ՝ տնօրեն կամ ուսուցիչ, մի խնդիր, կարծեք, ամենքին է մտահոգում: Խոսքը ներառական կրթության մասին է, որը, կարծեք, քննության չի դիմանում:

– Ներառական կրթության կարիք ունեցող երեխաները տարբեր բնույթի են. մինչև 2007-2008թթ. ներառական կրթությունը կազմակերպվում էր հատուկ կրթական հաստատություններում: Մոտ 15 տարի առաջ որոշվեց՝ այդ երեխաներին ինտեգրել հանրակրթական դպրոցների աշակերտներին, բայց չեմ կարծում, որ դրական արդյունք ունեցանք:

Ինտեգրման համար անհրաժեշտ են հատուկ պայմաններ: Հանրակրթական դպրոցներում նման պայմաններ չկան...

> ***...Մենք՝ հին սերնդի ներկայացուցիչներս, հիշում ենք՝ խորհրդային տարիներին, եթե ինչ-որ բնագավառում՝ դասագիրք կլինի, նոր ուսուցման մեթոդ կլինի, փորձարկում էր կատարվում, ապա տևում էր միջինը 5-7 տարի: Եվ արդյունքն այլ էր լինում:***

– Շատ քննարկվող մի հարց... Ավագ դպրոց, ի՞նչ տվեց մեզ, և արդյո՞ք պիտի շարունակենք ապրել ավագ դպրոցի հետ:

– Ես դեմ եմ, երբ դպրոցն ավարտում են 18 տարեկանում և անմիջապես մեկնում բանակ, դա չի կարելի: Գոնե շրջանավարտը մեկ տարի հնարավորություն պետք է ունենա մի տեղ սովորելու, մի տեղ աշխատելու, մասնագիտական առումով վերջնականապես կողմնորոշվելու:

12-ամյա կրթությունը որոշ երկրներում կար, բայց կարճ ժամանակ հետո հասկացան, որ սխալ է և հրաժարվեցին:

Ավագ դպրոցի նպատակն էր՝ որ կրկնուսուցումը վերացվի, սակայն տեղի ունեցավ հակառակը...

– Կարծու՞մ եք հե՞տ կկանգնենք ավագ դպրոցից:

– Հանրապետությունում 100-ից ավելի ավագ դպրոց կա, հետ կանգնելը դժվար կլինի, որովհետև կառույցներ են ստեղծվել, բազաներ են հիմնվել, ուղղակի պետք է եղածը կատարելագործել...

– Դասարան... Ի՞նչ ասել է դասարան քանակական տեսակետից: Նվազագույն թիվը, կարծեք, բացատրելի է՝ մեկ ամբողջական դասարանը չորս աշակերտ (եթե չեմ սխալվում), իսկ թույլատրելիի վերին շեմը՝ 35...

Քաղաքային գրեթե բոլոր դպրոցներում նման դասարաններ ունենք:

Չեմ պատկերացնում՝ ինչպե՞ս կարելի է 45 րոպեում շատ թե քիչ արդյունավետ աշխատել 35 աշակերտի հետ:

– Դուք խոսում եք մեր տարածաշրջանի քաղաքների դպրոցների մասին, բայց Երևանի դպրոցներում 35-ից էլ շատ են...

Աշակերտների քանակությամբ ֆինանսավորումը սկսվեց է 2003 թվականին, երբ դպրոցները համատարած վերափոխվեցին ՊՈԱԿ-ի: Շատերը գիտեն, թե իրավակազմակերպման ձևերը փոխելով՝ ամեն հարց լուծվում է, ոչ: Այստեղ ֆինանսավորելու հարցն է: Կամ դասարանի խտությունը պետք է նվազեցնել, բայց այս դեպքում դասարանների թիվը շատանում է, ժամաքանակը՝ նույնպես: Այն կարծիքին եմ, որ դասարանով պետք է ֆինանսավորում կատարել, ինչպես կար 2003 թվականից առաջ, այդ դեպքում ծախսը կշատանա, բայց կրթության որակը կփոխվի: Ինչ վերաբերում է աշակերտների թվաքանակին՝ ուսուցիչն ի՞նչ գերբնական հնարավորություն պետք է ունենա, որ 30 կամ 35 երեխայի հետ՝ տարբեր ընդունակությունների տեր, աշխատի:

Երկրորդ խնդիրն ուսուցչի՝ 45 րոպե ժամանակի մեջ տեղավորվելն է. ծնող կա, որ ցանկանում է իր երեխային ապահովել նորմալ կրթությամբ, և ստիպված ուսուցչի հետ պայմանավորվում է դասերից հետո երեխային պարապելու հարցով: Այստեղ ոչ ուսուցչին կարելի է մեղադրել, ոչ էլ՝ ծնողին:

– Դպրոցի գլխավոր դեմքը, կարելի է ասել, երկբևեռ է՝ աշակերտ և ուսուցիչ: Արդյո՞ք ուսուցչի հանդեպ պետական վերաբերմունքը ռացիոնալ է, ողջամիտ է:

Ծանրաբեռնվածություն՝ մեկ դրույքաչափը 22 ժամ (նախկին 18-ի փոխարեն), գնահատման նոր համակարգ, երբեմն անհարկի փաստաթղթեր լրացնելու պարտադրանք, ցածր աշխատավարձ, փոքր գյուղերում՝ երկկոմպլեկտ, եռակոմպլեկտ դասարաններ, փոքր գյուղերում՝ անգամ կադրեր չլինելու դեպքում՝ այսպես կոչված մրցույթ...

Եվ նման շատ հարցեր...

Չե՞ք կարծում, որ ուսուցչին պետք է ավելի շատ ստեղծագործելու, բուն կրթական գործով զբաղվելու հնարավորություն և շահագրգռվածություն տանք, ինչի արդյունքում հանրության մեջ էլ կարժևորվի ուսուցիչը:

– Այդ խնդիրը 20 տարի գոյություն ունի, բայց պետք է քայլեր արվեն լուծելու համար: Ուսուցչի վիճակը բարդ է՝ աշխատավարձը չի բավարարում, առավել ևս այսօրվա գնաճի պայմաններում: Խնդիրն առկա է, առաջնային հարցերից մեկն է...

Փոխվել է գնահատման համակարգը, մատյանները դարձել են էլեկտրոնային, խնդիր է դպրոցը համակարգիչներով ապահովելը: Ուսուցիչները դասերից հետո ստիպված են մնալ ու հերթով նույն համակարգչով գնահատականները ներառել: Մատյանը հանելը սխալ եմ համարում, քանի որ դասապրոցեսը դասարանում ուսուցիչը սկսում է ներկա-բացակա անելուց:

Լուրջ խնդիր է դրույքաչափը. տարիներ առաջ 18 ժամ է եղել: Հիմա փորձարարական դպրոցներում 18 ժամը ներդասարանային է դարձել, բայց 4 ժամ ավելի է վճարվելու՝ գնահատման համար:

– Դպրոցի տնօրենի մասին եմ ուզում խոսել... Որքանո՞վ է ողջամիտ հանրակրթական դպրոցի տնօրենի ընտրության-նշանակման գործող համակարգը:

Վերջերս էլ խորհուրդների ձևավորման սկզբունքը փոխվեց, ի՞նչ տվեց դա ՊՈԱԿ համարվող դպրոցին: Եվ... Արդյո՞ք հանրակրթական դպրոցը ղեկավարելու համար միջանկյալ օղակի կարիք կա՝ կրթության քաղաքականությունը վարող նախարարության և ՊՈԱԿ-ի միջև:

Տեսեք՝ ավագ դպրոց-նախարարություն հարաբերություններում միջանկյալ օղակ՝ մարզպետարան չկա, մի՞թե դա ավելի ողջամիտ կառավարման ձև չէ:

– Եթե հիշենք խորհրդային տարիները՝ այն ժամանակ կար նախարարություն, բայց դպրոցը կառավարվում էր տեղական իշխանությունների կողմից, որը նաև ֆինանսավորում էր: Մենք ունենք 1450-1500 հանրակրթական դպրոց, հարյուրից ավելի ավագ դպրոց, որոնց արդյունավետ և անմիջական կառավարումը, նաև հեռավորության պատճառով, գրեթե անհնար է:

Փորձարկումներ են եղել, բայց անհաջող, քանի որ համայնքապետը կարող էր իր ցանկությամբ նշանակել դպրոցի տնօրեն, դպրոցը ներքաշել ընտրական գործընթացների մեջ:

Խորհրդային տարիներին ընտրություն չկար, և ստացվում էր, որ ոչ մեկը ոչ մեկից կախում չուներ:

Կառավարման խորհուրդների մասով՝ քանակական փոփոխություններ եղան: Իմ մոտեցումը հետևյալն է՝ ստանդարտ թվին դեմ եմ, դպրոց կա 700 աշակերտ ունի: Պետք է աշակերտների քանակից կախ-

Հանդիպեցին հայրենակիցներին



Քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ընդհանուր քիմիայի և քիմիական տեխնոլոգիաների ամբիոնների վարիչ Գագիկ Թորոսյանը և 1990-1995 թթ. ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր, «Գերագույն խորհուրդ» պատգամավորական ակումբի նախագահ Ռուբեն Թորոսյանը արմատներով Կապանի տարածաշրջանի Ագարակ գյուղից են: Սեպտեմբերի 7-ին եղբայրները եղան իրենց նախնիների ծննդավայրում, այցելեցին նրանց գերեզմաններին: Հաջորդ կանգառը Սյունիքի մարզային գրադարանն էր, որի սպասարկման բաժնում հանդիպեցին նրա աշխատակիցների և ընթերցողների հետ: Մինչ այդ իրենց անձնական գրադարանից գրքեր՝ գեղարվեստական, գիտական, մանավանդ բնապահպանական թեքումով, հանձնեցին գրադարանին: Գ. Թորոսյանը հեղինակ է 300-ից ավելի հոդվածների, որոնք տպագրվել են «Առավոտ», «Իրավունք», «Голос Армении» և այլ թերթերում, ամբողջացել «Հետադարձ հայացք» և «Հետադարձ հայացք-2 կամ 20 տարի անց» գրքերում: Դրանք ևս հանձնվեցին գրադարանին:

Գագիկ Թորոսյանը, ով գիտաժողովների է մասնակցել աշխարհի մոտ 60 երկրում, սպասարկման բաժնի Ամերիկյան անկյունում հետաքրքրական դրվագներ ներկայացրեց իր աշխատանքային գործունեությունից, հիմնականում արտասահմանյան գործուղումների հետ կապված, նաև զանազան երկրների և ազգերի սովորույթներին առնչվող: Անմիջական զրույցի մի մասն առնչվում էր սփյուռքահայության հետ նրա հանդիպումներին:

Բանախոսը վերջում պատասխանեց ներկաներին հետաքրքրող հարցերին:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Իմ ընկեր Մխիթար Հայրապետյանին՝ դեռ մոտ չէ իրիկնաժամը, դեռ անելիք ու ասելիք ունեք

Գրեթե շաբաթը մեկ այցի եմ գնում հայրենի Հարժիս. դա ինձ համար, կարծեք, ուխտագնացության պես մի բան է դարձել: Գնում եմ ուժ առնելու նրա հողուջրից, իմ մանկության կածաններից: Գնում եմ արած-չարածս պարզաջրելու, իմացած-չիմացածս նժարելու այն մարդկանցից քաղած իմաստություններից, ովքեր, ավաղ, այլևս չկան:

Բայց և, բարեբախտաբար, կան արժանահարգ մարդիկ, ովքեր շարունակում են գյուղի բազմադարյա ավանդույթները, ովքեր տեր են մեր ազգային-քրիստոնեական արժեքներին, ովքեր պահում-պահպանում են գյուղի՝ սերունդների ջանքերով հյուսված դիմագիծը, որոնց ջանքով հայի անմահության համ ու հոտն է իշխում օրինյալ այդ եզերքում: Այդ մարդկանցից է Մխիթար Հայրապետյանը, ում 70-ամյակը լրանում է այսօր:

Դեռևս գյուղի դպրոցի բարձր դասարաններում սովորելիս՝ շատերս էինք ձգտում ընդօրինակել նրան, ով արդեն դպրոցն ավարտել էր բարձր առաջադիմությամբ, ստացել բարձրագույն կրթություն և սովորում էր ասպիրանտուրայում: Հետո (ի տարբերություն շատերի) վերադարձավ գյուղ և ագրոնոմ-գիտնականի մասնագիտությամբ ծառայեց իր բնօրրանին:

Անկախության տարիներին, երբ արդեն լուծարվեց գյուղի պետական տնտեսությունը, նրա փորձն ու գիտելիքները շարունակեցին օգտագործել տարածքային ու տեղական իշխանությունները: Կարողացավ գյուղացիական անհատական տնտեսություն հիմնել և խելամիտ կազմակերպելու ուսանելի օրինակներ ցույց տալ, համագյուղացիներին օգտակար լինելու կյանքով ապրել: Եվ այդպես՝ մինչև այսօր....

Ու այդ ամենի շնորհիվ է, որ Գորիսի ու Սիսիանի տարածաշրջաններում դաշտավարության ոլորտի լավագույն մասնագետի համբավ է ձեռք բերել: Միևնույն ժամանակ՝ առավել գնահատելի է մարդկային, ընկերական հարաբերություններում նրա պահվածքը, գյուղի՝ շատ-շատ դեպքերում դեռևս կուսական, անարատ հարաբերությունները կրելու և պահպանելու նրա ձգտումը:

Ոչ մի դեպքում չաղարտվեց, քանիցս ցեխոտված միջավայրը ոչ մի դեպքում չկարողացավ նրան ներքաշել իր ջրապտույտի մեջ: Եվ մնաց գյուղի գեղեցիկ ավանդույթների, մարդկային բարի հարաբերությունների արթուն ժամապահը խառնափնթոր մեր օրերում: Նաև գեղեցիկ ընտանիք է ստեղծել, լավ ծնողի ու պապիկի պատվանդան բարձրացել: Ու հարգելի ծնողներից ժառանգված ավանդույթով կարողացել է պահել օջախի բարձր անունը:

2020-ի աշնանից, անտարակույս, բոլորիս սրտի վրա ամպ է նստած: Բայց երբ (նման իրավիճակում) ուժ ենք գտնում մեր մեջ և միմյանց ծնունդ շնորհավորում, տոնական միջոցառումներ կազմակեպում, ուրեմն վերհառնելու ենք ազգովի և անպայման շարունակելու ենք մեր երթը դեպի ապագա:

Իսկապես, քանի-քանի հոգեվարք ենք մերժել ազգովի և մերժելու ենք դեռ: Քանի-քանի անգամ ենք անկումից փրկվել և ամենատարբեր ցավերին դիմացել: Եվ այդ ամենը շնորհիվ մարդու, հայի, հայրենի քարափների նվիրյալի այն տեսակի, որի մերօրյա կրողներից է Մխիթար Խաչատուրի Հայրապետյանը:

Ծնունդդ շնորհավոր, իմ լավ բարեկամ և ընկեր: Քեզ՝ առողջություն, հաջողություններ:

Եվ, իհարկե, շնորհակալություն քո լինելության համար. երբ գյուղ եմ այցելում՝ գիտեմ, որ այնտեղ դեռ ինձ սպասողներ կան, որոնց թվում նաև դուք եք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
6 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021 Թ.

Հոկտեմբերի 1-ից աշխատող քաղաքացիները 2 շաբաթը մեկ անգամ ՊՇՌ բացասական թեստ պետք է ներկայացնեն

«Հոկտեմբերի 1-ից ուժի մեջ է մտնում բոլոր տնտեսվարողների աշխատակիցների պարտադիր 2 շաբաթը մեկ անգամ ՊՇՌ թեստի իրականացման պահանջը: Բացառություն են կազմում հղիները, պատվաստվածները և բժշկական ցուցում ունեցողները», – ասել է ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը:

Ինչ վերաբերում է պատվաստանյութերին, նախարարը հավաստիացրեց, որ չինական պատվաստանյութի և Astrazeneca-ի մատակարարումների հետ կապված խնդիր չկա:

//

Կված լինի խորհրդի կազմում ընդգրկվողների թիվը: Կտրուկ դեմ եմ, որ նույն անձը ներառված լինի տարբեր դպրոցների կառավարման խորհրդում:

– Դասագիրք, ուսումնական ծրագրեր... Չե՞ք կարծում, որ խնդիրներ ունենք այդ ոլորտում: Եթե չափորոշիչի փոփոխություն տեղի ունենա (ինչպես քիչ առաջ նշեցինք), ապա, ինքնըստինքյան, փոփոխություններ կկատարվեն նաև դասագրքերում ու ծրագրերում:

Դուք կարո՞ղ եք դասագրքաստեղծ աշխատանքի ավելի արդյունավետ ձև առաջարկել:

– Ենթադրվում է, որ չափորոշչի փոփոխության դեպքում կլինեն նաև ծրագրային և դասագրքային փոփոխություններ: Սկսեմ հիմքից՝ եթե ցանկանում ենք նոր կրթական համակարգ ունենալ, պետք է մշակվի նոր հայեցակարգ...

Ռազմավարական ծրագիրը 10-20 տարվա համար է, որից էլ բխում են մյուս փաստաթղթերը:

Հիմա մեզ մոտ ռազմավարության վերաբերյալ քննարկումներ չկան, ուղղակի որոշակի դասագրքային փոփոխություններ կլինեն: Ես այն կարծիքին չեմ, որ դասագրքերը լիարժեք լավն են: Լավն էլ ունենք, բայց վատն էլ առկա է: Դասագրքերի կազմման գործընթացում մի ժամանակ ներառված էին ակադեմիական, գիտական աստիճան ունեցող անձինք: Այդ ժամանակահատվածում մատչելիության խնդիր առաջացավ: Այսինքն՝ տեղ էինք տալիս ակադեմիական մակարդակին, որը բարդ էր աշակերտի համար: Դասագիրքն առարկայի նկատմամբ հրապուրանք ստեղծելու համար է, իսկ մնացածը պայմանավորած է դասավանդողի վարպետությամբ:

Հիմա մրցույթին մասնակցում են հրատարակչությունները... Նախարարությունը ստեղծում է երկու մրցութային հանձնաժողով՝ ուսուցիչներից և դասախոսներից:

Այս հարցի շուրջ նույնպես քննարկումներ պետք է կազմակերպել:

– Կորոնավիրուսի ժամանակ դպրոցը բախվեց նոր իրողությունների, դրանցից մեկը հեռավար ուսուցումն է: Հիմա էլ՝ այն դպրոցներում, որտեղ առարկայական ուսուցչի պակաս կլինի, տվյալ առարկաները կկարողանան դասավանդել էլեկտրոնային եղանակով՝ մենթոր դպրոցների միջոցով: Հեռավար ուսուցում, էլեկտրոնային դասավանդում... Դրա արդյունավետության Ձեր գնահատականը՝ նախորդ ուսումնական տարվա փորձը նկատի ունենալով:

– Բնական է, որ լավ արդյունք չի տալիս: Կենդանի շփումից լավ ուսուցման ձև գոյություն չունի: Ինչ վերաբերում է մենթոր դպրոցների միջոցով հեռավար կրթության կազմակերպմանը, այն կարող է միայն ժամանակավոր լուծում լինել:

Հարցի լուծումն այն է, որ կարողանանք անցնել կենդանի ուսուցման, ապահովենք դասապրոցեսում ներառված բոլոր անձանց առողջությունը: Հեռավար կրթությունը չի կարելի անվերջ շարունակել:

– Ուսուցման երկարօրյա ձևաչափ... Ձեր դիտարկումը:

– Ծնողներն աշխատում են, երեխաների միայն քիչ մասն է գնում պարապմունքների, ուստի և երկարօրյա ուսուցումն անհրաժեշտ է: Երկարօրյայի պարապողը պետք է աշխատավարձ ստանա, պիտի երեխաներն ապահովվեն սննդով. դա լրացուցիչ ծախս է պետության համար: Ենթադրենք ծախսերի մի մասը փոխհատուցում են ծնողները, բայց գիտենք, որ ծնողների վճարունակությունն էլ մեծ չէ:

– Ինչպե՞ս հասկանալ, որ հանրակրթական դպրոցի տված գիտելիքները բավարար չեն լինում բուհ ընդունվելու համար. իսկ միգուցե սխա՞լ է իմ այդ դիտարկումը:

Չմոռանանք՝ խորհրդային տարիներին դպրոցական ծրագիրը յուրացրած երեխան գնում և բուհ էր ընդունվում... Իսկ հիմա՝ պարտադիր կարգով կրկնուսույցի քուրայով երեխան պետք է անցնի:

– Դա ծրագրային խնդիր չէ: Արդյո՞ք հնարավոր է 45 րոպեում այդքան մարդու կրթել... Կա նաև խզվածություն դպրոցում տրվող գիտելիքի և բուհերի պահանջների միջև: Ես կտրուկ դեմ եմ թեստային գնահատման համակարգին, դա կարելի է համարել գնահատման ձևերից մեկը, բայց ոչ համատարած թեստային գնահատման անցնել: Երեխաներ կան, որ գրատախտակի մոտ անկարող են ֆիզիկայի ու մաթեմատիկայի վերաբերյալ երեք նախադասություն արտաբերել, բայց թեստային ձևաչափով բարձր գնահատական են ստանում:

Տարիներ առաջ ստեղծվեց ԳԹԿ-ն, որը համարում եմ ծախսատար ու ավելորդ հիմնարկ: Ես գյուղական ուսուցչի հետ եմ զրուցում, ասում է՝ երեխան, որ պարզ բանաձև չի կարողանում կիրառել, թեստով 11 միավոր է հավաքում և բուհ ընդունվում: Ընդ որում՝ այդ թեստի որևէ տող չի գրել, միայն մի քանի տեղ իքս նշան է դրել:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ

Հավերժ փառք Արցախյան պատերազմում նահատակված հայոց քաջորդիներին

Արտեմ Անտոնյան. զոհվեց առանց ժառանգներ թողնելու

Անտոնյան Արտեմ Վլադիմիրի. ծնվել է 1978 թ. փետրվարի 8-ին Կապանում: Սովորել է Կապանի թիվ 9 միջնակարգ դպրոցում: Դպրոցն ավարտելուց հետո զորակոչվել է բանակ, ծառայել Քարվաճառում:

Արտեմը կամ ինչպես նրան մտերիմներն են անվանում՝ Արտյոմը չէր աշխատում, Կապարտում էր բնակվում: Մայրը՝ տիկին Լյուսյան, ով որդու զոհվելուց հետո մենակ է մնացել /ամուսինը 1 տարի առաջ էր մահացել/, հուզմունքից խեղդվող ձայնով պատմում է, որ որդին պատերազմ գնալուց առաջ ներողություն է խնդրել՝ իրեն ժառանգ չթողնելու համար. *«Կարծես՝ ինչ-որ բան էր զգում, ինքը միշտ սարերում էր, բնությունը շատ էր սիրում, մեր հայրենիքն էլ էր շատ սիրում, մահից չէր վախենում, ընդհանրապես ոչնչից չէր վախենում, թե մտքով ինչ անցավ այդ պահին, որ այդպիսի բան ասաց, չգիտեմ»:*

Արտեմի զոհվելու հանգամանքներն ընկերը՝ Արտաշես Զաքարյանն է ներկայացնում. *«Արտյոմի հետ միշտ միասին ենք եղել, եղբայրների պես ենք եղել: Երբ իմացավ, որ գնում եմ Զաբրայիլ /Զրական/, եկավ ու Գորիսում միացավ ինձ՝ որպես կամավոր: Պատերազմի դաշտում Արտյոմի նման ընկեր ունենալը բախտավորություն է: Արտյոմը շատ վիրավորների է օգնել, ամենածանր պայմաններում անգամ դուրս է բերել վիրավորներին: Արտյոմի ու մի քանի ընկերների հետ շրջափակման մեջ գտնվող զինվորներ գտնելու նպատակով մտել ենք Զաբրայիլի հետ շրջափակման մեջ գտնվող զինվորներ գտնելու նպատակով մտել ենք Զաբրայիլի արդեն գրավված հատվածները: Նա պատրաստակամ էր կատարելու ցանկացած աշխատանք, եթե պետք էր դիրքերից իջնել ջուր, սնունդ կամ զինամթերք բերելու, նա առանց մի վայրկյան հապաղելու, առանց երկմտելու գործի էր անցնում: Չարաբաստիկ հոկտեմբերի 14-ին կեսօրից հետո, ժամը 2-ն անց էր, Զաբրայիլում՝ հենց այն խրամատի վրա, ուր ես էի, ականանետի երեք արկ ընկավ: Արտյոմը մեզանից մի փոքր այն կողմ էր, երբ տեսավ, որ իմ խրամատն են արկակոծում՝ իր խրամատից դուրս է եկավ՝ համոզվելու, որ ինձ հետ ամեն ինչ նորմալ է: Չորրորդ արկն ընկավ նրանից մի քիչ հեռու: Արկի պայթյունից Հարութն ու Արտեմը զոհվեցին, բեկորից Արտյոմը վիրավորվեց: Վերքն ազդրի վրա էր, շատ ուժեղ արյունահոսություն սկսվեց: Փորձեցի առաջին օգնություն ցույց տալ՝ ազդրը կապեցի գոտիով, քանի որ ժգուտ չունեինք: Երկու ընկերներս ու ես Արտյոմին 2-3 կմ. բերել ենք մեքենա գտնելու հույսով, արդեն «Ուրալին» էինք հասնում, երբ Արտյոմն ասաց, որ շունչը կտրվում է, փորը տաքանում, հասկացա՝ ներքին արյունահոսություն ունի: Հասցրինք մեքենային, բայց արդեն մահացել էր:*

Արտյոմն ասում էր՝ այս կռիվը մերն է, մենք պիտի ավարտենք, մենք պիտի այս հարցը վերջնական լուծենք, որ մեր երեխաները պատերազմ չտեսնեն...

Ահավոր է հիշել այդ օրերը, մեզ միայն մի բան է մնում՝ երբեք չմոռանալ, որ հայրենի հողի համար զոհված յուրաքանչյուր հայ հերոս է...» :

Արտեմ Անտոնյանի աճյունն ամփոփված է Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում: //

Դանիելյան Լևոն. Տաթևը գանձ է կորցրել

Դանիելյան Լևոն Գրիգորի. ծնվել է 2001 թ. օգոստոսի 30-ին Տաթև գյուղում: Սովորել է Տաթևի միջնակարգ դպրոցում: 2019 թ. ընդունվել է Հայաստանի ազգային ճարտարագիտական համալսարանի տնտեսագիտության բաժին:

2020 թ. հունվարի 8-ին զորակոչվել է բանակ, ծառայության ուսումնական վեցամսյա փուլն անց է կացրել Գյումրիում: Հիմնական ծառայության վայրը Հադրութի զորամասն էր, որում կրտսեր սերժանտ Լևոն Դանիելյանը հակատանկային ջոկի հրամանատար էր: Գորիսեցի Լյովին Հադրութի զորամասի զինծառայողները նկարագրում են որպես չափազանց մարդասեր զինվորի, պատմում են, որ պատերազմի օրերին Լևոնն իր խոցած թշնամական տանկերի անձնակազմի մասին էր խոսում, ասում, որ նրանք էլ ինչ-որ մեկի որդին են, եղբայրը, ամուսինը:

Դեռ Գյումրիի զորամասում Լևոնն արժանացել էր երկու մեդալի՝ լավ ծառայության ու վարքի համար: Հադրութի զորամասում նա հասցրել էր աչքի ընկնել առաջին օրերին՝ նրան էր վստահվել նորակոչիկներին զինվորական երդմանը պատրաստելու պատիվ-պարտականությունը, որի համար կարճ ժամանակով տեղափոխվել էր Մարտունու զորամաս:

Սեպտեմբերի 27-ին Ադրբեջանը պատերազմ սկսեց: Արցախի հերոս Դավիթ Ղազարյանի հրամանատարության ներքո Լևոնն ու ընկերները նշանակալից մարտեր են վարել Հադրութում: Լևոնի հակատանկային զենքի վարժ տիրապետման շնորհիվ հակատանկային ջոկը տեխնիկայի ու մարդուժի մեծ վնասներ է հասցրել թշնամուն: Հադրութից դուրս են եկել «նահանջ» հրամանից հետո: Հադրութից դուրս գալուց հետո կռվել են Մարտունիում:

Նոյեմբերի 6-ին Լևոնը միացել է Շուշիի պաշտպանության մարտերին, նոյեմբերի 7-ին զանգահարել է քրոջը, ասել, որ Քարին տակում շրջափակման մեջ են, սպասում են օգնության: Հեռախոսային այդ խոսակցությունից հետո ընտանիքի անդամներն այլևս Լևոնի հետ կապ հաստատել չեն կարողացել:

Նոյեմբերի 9-ի հայտարարությունից հետո հարազատները հեռախոսազրույց են ունեցել Լևոնի հրամանատարի հետ, ով ասել է, թե տղաները շրջափակման մեջ են ու շուտով դուրս են բերվելու «Կարմիր խաչի» օգնությամբ:

Նոյեմբերի 17-ին Տաթևը կրկին անգամ ցնցվեց բոթից՝ Լևոնը զոհվել է: Դատաբժշկական փորձաքննությունը մահվան ամսաթիվ նշել է նոյեմբերի 9-ը...

Լևոնին սիրում էին բոլորը, Տաթևում հիմա էլ առանց արցունքների նրա անունը չեն արտասանում: *«Լևոնի զոհվելու լուրը լսելուց հետո մի ամբողջ օր չեմ կարողացել խոսել, հիմա էլ չեմ կարող ասել, թե դա ինչ ցավ է, այդ ցավն անուն չունի ու դա նկարագրելու համար բառեր չկան: Լևոնը ձեռքերիս վրա է մեծացել, ձեռքերիս վրա էլ նրան մինչև գերեզմանատուն եմ տարել: Նրան բոլորն էին սիրում փոքր երեխաներից մինչև ծերունիներ: Խելացի, համեստ, հարգալից երիտասարդ էր, Տաթևը դեռ պիտի հպարտանար նրա սխրանքներով, բայց սխրանքները պիտի կյանք չարժենային, ցավն այնքան մեծ է, որ հպարտանալու տեղ չի թողնում: Տաթևը զավակ չէ՝ գանձ է կորցրել...»,* – պատմում է համագյուղացի երիտասարդներից մեկը:

Լևոն Դանիելյանի աճյունը հուղարկավորվել է Տաթևի գերեզմանատանը նոյեմբերի 19-ին:

Լևոն Գրիգորի Դանիելյանը պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով՝ հետմահու: //

Ծատրյան Անդրանիկ. Արցախը պաշտպանելու մեկնեց կամավոր

Ծատրյան Անդրանիկ Սերժիկի, ծնվել է 1987թ. սեպտեմբերի 30-ին Ագարակ քաղաքում: Միջնակարգ կրթությունը ստացել է Ագարակ քաղաքի դպրոցում: Սովորել է Երևանի մենեջմենթի համալսարանում, մասնագիտությամբ իրավագետ էր: Աշխատում էր Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատում՝ մեքենավար: Ամուսնացած էր՝ ունի 2 դուստր:

Անդրանիկի մասին զրուցում ենք կնոջ հետ, պատմում է, որ կրտսեր դուստրը մի քանի ամսական է եղել ու հայրիկին չի հիշում, իսկ ավագը, ով սովոր էր իր բոլոր նկարները հայրիկին ցույց տալ, հիմա նկարները երկնքին է ցույց տալիս, որ հայրիկը նայի, տխրում, մինչև իսկ լաց է լինում, երբ հայրիկը, գոնե երկնքից, սպասված գովասանքները չի ասում...

Անդրանիկ Ծատրյանի ու իր ընտանիքի մասին խոսելիս հարևանների աչքերն արցունքոտվում են. *«Օրինակելի ընտանիք ասվածը նրանց մասին է, այնքան շատ էին իրար սիրում, շատ-շատ ափսոս էր, հիանում էինք նրանցով, հիմա չգիտենք էլ՝ հանդիպելիս ինչ ասենք...»:*

Անդրանիկը Սյունիքում էր ծնվել, սյունեցին գիտի, որ թուրքի կողքին զենքը ձեռքին են ապրում, որ թուրքը միայն սրի լեզուն է հասկանում, սյունեցին չզարմացավ, երբ 2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանը պատերազմ սկսեց, այլ զենք առավ ու կանգնեց զինվորի կողքին. Անդրանիկն էլ ընկերների հետ նախ՝ Սյունիքի դիրքերը պահելու մեկնեց, ապա՝ Արցախ: Արցախ մեկնելու որոշումն Անդրանիկինն էր, նա կամավոր էր միացել Արցախի պաշտպանությանը...

Ընտանիքի անդամներին չէր ասել, որ Արցախում է, չէր ցանկացել նրանց անհանգստացնել: *«Հանգահարելիս այնքան հանգիստ ու զվարթ էր խոսում, ասես՝ ինքն առողջարանում էր, ոչ թե առաջնագծում, նա չափազանց հոգատար էր, բացառիկ հայր, բացառիկ մարդ»,* – պատմում է կինը:

Անդրանիկը հաճախ էր զանգահարում, կինը չէր էլ պատկերացնում, որ հոկտեմբերի 10-ի իրենց խոսակցությունը վերջինը կլինի, որ ժամեր անց՝ հոկտեմբերի 11-ի լուսաբացին, Անդրանիկը ԱԹՍ-ի առաջին հարվածից հետո չի շտապի թաքստոց գտնել, այլ իր բնույթի համաձայն, կմնա ծանր վիրավոր ընկերոջն օգնելու և ինքն էլ կանմահանա Իշխանաձորում:

Անդրանիկ Ծատրյանը պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով՝ հետմահու: //

Նարեկ Մանուկյան. «Հանձնվել չկա»

Նարեկ Սուրենի Մանուկյան. ծնվել է 2000թ. դեկտեմբերի 2-ին Սիսիանում: Նարեկը երկու տարեկան էր, երբ ընտանիքը տեղափոխվել է Երևան: Փոքր տարիքից առանձնանում էր իր հասունությամբ, մեծի պես էր վերլուծում բոլոր իրողությունները... Սիրում էր մտքին եկածը դարձնել նպատակ ու գնալ նպատակի հետևից....

Սովորել է Երևանի թիվ 191 միջնակարգ դպրոցում: Նա լավ ու չարաճճի աշակերտ լինելուց զատ, եղել է իր ուսուցիչների ու դասընկերների լավ ընկերն ու խորհրդատուն:

Դպրոցն ավարտելուց հետո, ընդունվել է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Պոլիտեխնիկ քոլեջի ռադիո և էլեկտրոնիկայի բաժին: Սիրում էր անել ամեն բան, ինչ կապված էր տեխնիկայի հետ: Մեկ տեխնիկայից տարբեր մասեր ավելացնում էր մեկ այլ տեխնիկայի և ստեղծում նոր սարք... ցավոք, ուսումը կիսատ մնաց:

2019 թ. հունվարից ծառայության է անցել Դիլիջանում: Նարեկը մեքենա վարելուն վարժ տիրապետում էր, ծառայության ընթացքում «գրադ»-ի մեքենան էր վարում, չնայած «գրադ»-ի մեծությանն ու իր փոքրամարմին լինելուն:

2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանը պատերազմ սկսեց. Նարեկը սեպտեմբերի 28-ին է միացել Ջրականում /Զաբրայիլ/ կռվող ընկերներին:

Խոստացել էր, որ անպայման վերադառնալու է...

Հանձնվել չէր սիրում և դա դարձրել էր իր կյանքի կարգախոսը, դաջել էր իր մարմնին՝ «Հանձնվել չկա» արտահայտությունը, և կյանքի դժվարությունները հաղթահարել էր հենց այդ բանաձևով:

Այդ կարգախոսով էլ կռվել է թշնամու դեմ ու առանց հանձնվելու կյանքը տվել հայոց հողի պաշտպանությանը:

Հոկտեմբերի 11-ին Նարեկն անմահացել է Ջրականում, քանի որ իր կյանքի կարգախոսը թույլ չէր տա հանձնվել...

Նարեկ Մանուկյանի աճյունն ամփոփված է Սիսիանի զինվորական պանթեոնում: //

ԷՋԻ ՆՅՈՒԹԵՐԸ ՊԱՏՐԱՍՏԵՑ ՏԻԳՐԱՆՈՒՀԻ ԲԱԴԱԼՅԱՆԸ

«Նոր Նախիջևան» մարդասիրական հիմնադրամի անակնկալը

Օգոստոսի 23-ին Կապանի մշակույթի կենտրոնում Կապան խոշորացված համայնքի սահմանամերձ բնակավայրերի դպրոցների տարրական դասարանների շուրջ յոթ տասնյակ աշակերտների համար «Նոր Նախիջևան» մարդասիրական հիմնադրամը փոքրիկ համերգ էր կազմակերպել:

Համերգային ծրագրում ազգային ու ժամանակակից պարեր էին, Կապանին ու Հայաստանին նվիրված երգեր: Բայց փոքրիկներն անհամբերությունը թաքցնել չէին կարողանում. կողքիս նստած 7-ամյա Սուսաննան շրջվում է դեպի ինձ. *«Նվերներն ո՞ւշ են տալու, ասել են պայուսակներ ենք ստանալու»:*

Համերգն ավարտվեց «Նոր Նախիջևան» մարդասիրական հիմնադրամի տնօրեն Միեր Հովհաննիսյանի ելույթով:

– Ողջունում եմ բոլորիդ, շնորհակալ եմ, որ ներկա եք այս փոքրիկ միջոցառմանը: «Նոր Նախիջևան» մարդասիրական հիմնադրամը շարունակում է մնալ սահմանի բնակչի կողքին: Մեզ համար թե՛ մեծ պատիվ է, թե՛ մեծ պատասխանատվություն նոր ուսումնական տարվան ընդառաջ ձեր կողքին լինել: Կցանկանայի փոխանցել մեր հոգաբարձուների խորհրդի նախագահ Հարություն Սուրմալյանի շնորհավորանքներն ու բարեմաղթանքները. Հարություն Սուրմալյանը մարդ է, ով այս ամենի գլխավոր աջակիցն է: Մեր ծրագրերում իրենց ներդրումն են ունեցել նաև Կանադայի և Դուբայի մեր հայրենակիցները: Ցանկանում եմ շնորհակալությունս հայտնել Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանին, ով աջակցել է մեզ կազմակերպչական բոլոր հարցերում, – ասաց Միեր Հովհաննիսյանը:

Այնուհետև նա բեմ հրավիրեց դպրոցի տնօրեններին և աշակերտներին:

Աշակերտները մոտենում էին կազմակերպիչներին ու ստանում իրենց համար նախատեսված պայուսակը:

Տնօրենները ևս ձեռնունայն չհեռացան՝ հիմնադրամը դպրոցների համար գեղարվեստական գրականության կապոցներ էր պատրաստել:

Սյունիքի միջնակարգ դպրոցի տնօրեն Լիլիթ Առաքելյանը շնորհակալական խոսքում նշեց, որ հայրենիքը սահմանից է սկսվում, և ողջունելի է, որ այս իրավիճակում կազմակերպությունները կանգնում են սահմանային բնակավայրի բնակչի ու երեխայի կողքին:

Ելքի մոտ հանդիպեցի կողքիս նստած 7-ամյա Սուսաննային. այս անգամ դեմքին գոհունակ ժպիտ էր...

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ ԲԱԴԱԼՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ «Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի դասախոսների և արտադրության վարպետի թափուր տեղերի համար՝

Թափուր աշխատատեղերը	Ծանրաբեռնվածությունը	Սահմանված պահանջները
«Անգլերեն» առարկայի դասախոս	1000 ժամ	Բարձրագույն կրթություն՝ անգլերեն լեզվի մանկավարժի որակավորմամբ
«Ֆիզիկա» առարկայի դասախոս	254 ժամ	Բարձրագույն կրթություն՝ ֆիզիկայի մանկավարժի որակավորմամբ
«Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության մասնագիտական մոդուլների դասախոս	473 ժամ	Բարձրագույն կրթություն՝ ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի մանկավարժի որակավորմամբ
«Համակարգիչների շահագործում» մասնագիտության մասնագիտական մոդուլների դասախոս	450 ժամ	

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է բանավոր՝հարցազրույցի միջոցով, հաստատության կողմից նախապես կազմված բանավոր առաջադրանքներից, որոնք առնչվում են դասավանդվելիք առարկային (մոդուլին) և մանկավարժական գործունեությանը: Յուրաքանչյուր մասնակցին պատրաստվելու համար տրվելու է մինչև 15 րոպե ժամանակ, իսկ պատասխանն արձանագրվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից:

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերը՝

1) դիմում,
2) կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը),
3) անձնագիր (բնօրինակը և պատճենը),
4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
5) ինքնակենսագրություն,
6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7) այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,
8) ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը):
9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝

1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,
2) դատական կարգով զրկվել է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից,
3) տառապում է ՀՀ կառավարության կողմից հաստատված ցանկում ընդգրկված այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության կատարմանը,
4) դատապարտվել է հանցագործության համար և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար:

Փաստաթղթերն ընդունվում են մրցույթի հայտարարության հրապարակման օրվանից սկսած 10 աշխատանքային օրվա ընթացքում մինչև սեպտեմբերի 13-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչև 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի: Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 24-ին, ժամը 14:00-ին «Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում, հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզի, ք. Գորիս, Հայկազունիների փող. 4 հասցե:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 077-78-22-79, 094-59-54-18 հեռախոսահամարներով:

ԿՈՐԵԼ Է «Նաիրիտ» ՓԲ ընկերությանը պատկանող 4-701 մակնիշի տրակտորի 88-66 SL պետհամարանիշը: Համարել անվավեր:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Կապանի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ ներքոգրյալ մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար.

- «Սոցիալական մանկավարժություն» մոդուլը դասավանդող դասախոս-102 ժամ

Ուսումնական պարապմունքներ վարող դասախոսը պետք է ունենա դասընթացի բնույթին համապատասխանող միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում, կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ՝ եթե տվյալ դասընթացի ուղղությամբ միջին կամ բարձրագույն կրթություն Հայաստանի Հանրապետությունում չի իրականացվում: Հատուկ մասնագիտական դասընթացները վարող դասախոսների համար մասնագիտական աշխատանքի փորձի առկայությունը ցանկալի է:

Մրցույթին մասնակցելու համար անձը պատասխանատու աշխատակցին է ներկայացնում ներքոնշյալ փաստաթղթերը.

1. Դիմում
2. Կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը)
3. Անձնագիր (բնօրինակը և պատճենը)
4. Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում)
5. Ինքնակենսագրություն
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի
7. Արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը):

Փաստաթղթերը ընդունվում են քոլեջի մասնաշենքում, ս.թ սեպտեմբերի 9-ից մինչև սեպտեմբերի 24-ը ներառյալ, ամեն օր, ժամը 10:00-ից մինչև 16:00, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերին:

Մրցույթը տեղի կունենա 2021 թ. հոկտեմբերի 1-ին ժամը 12:00-ին քոլեջում:

Հասցե՝ ք. Կապան, Շահումյան 37ա, հեռախոս՝ 0285-5-25-70, 093-777-663:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍՆ «Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ ներքոգրյալ թափուր հաստիքների համար.

- «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում» մասնագիտության դասախոս (1 դրույք)
- «Համակարգիչների գեղարվեստական նախագծում» մասնագիտության դասախոս (1 դրույք)
- «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության դասախոս (1 դրույք)
- «Պատմություն» մասնագիտության դասախոս (0,75 դրույք)

Հաստիքներին ներկայացվող պահանջներն են.

- - Բարձրագույն մասնագիտական կրթություն և տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային փորձ

Մրցույթին մասնակցելու համար անձը ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը.

- Դիմում
- Կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ՝ բնօրինակը և պատճենը)
- Անձնագիր (բնօրինակը և պատճենը)
- Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում)
- Ինքնակենսագրություն
- Մեկ լուսանկար՝ 3/4 չափսի
- ՀՀ արական սեռի ներկայացուցիչները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճեն)

Փաստաթղթերը ընդունվում են քոլեջի ուսումնական մասնաշենքում, 2-րդ հարկ, 203 սենյակ, ս/թ սեպտեմբերի 9-22-ը, ժամը 10:00-ից 15:00:

Մրցույթի անցկացման օրը՝ սեպտեմբերի 27-ին, ժամը 10:00:

Մանրամասների համար դիմել. syunikcollege@rambler.ru, հասցե՝ ք. Կապան, Գ. Արզումանյան 11ա, հեռախոս՝ (0285) 5 30 61:

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ Շնորհավորում ենք մեր կողմից սիրված ու հարգված հարեւանուհի Ելենա Պողոսյանին՝ ծննդյան 90-ամյակի առիթով: Մաղթում ենք առողջություն ու խաղաղ օրեր: Լավագույն մաղթանքներով՝ Շահումյան 20 շենքի բնակիչներ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ / ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ / ԱՌԿԱ, ՀԵՌԱԿԱ

Գորիսի պետական համալսարանը շարունակում է 2021/2022 ուստարվա մագիստրատուրայի ընդունելությունը՝ առկա և հեռակա կրթաձևերով:

Առկա ուսուցմամբ փաստաթղթերի ընդունելությունն իրականացվում է ս.թ. օգոստոսի 25-ից մինչև սեպտեմբերի 10-ը՝ աշխատանքային օրերին, մրցույթը՝ ս.թ. սեպտեմբերի 13-15-ը (մանրամասները՝ կից հղմամբ https://clck.ru/X7ZQn):

Հեռակա ուսուցմամբ ընդունելությունը մեկնարկել է ս.թ. օգոստոսի 25-ից և կտևի մինչև սեպտեմբերի 24-ը: Մրցույթը՝ սեպտեմբերի 27-30-ը: Փաստաթղթերն ընդունվում են տեղում՝ ԳՊՀ ընդունող հանձնաժողովի աշխատասենյակում: Փաստաթղթերի ցանկը ներկայացված է ստորև.

- անձնագրի պատճենը,
- դիպլոմի և հավելվածի (միջուկի) բնօրինակները՝ պատճենների հետ միասին,
- ինքնակենսագրություն (համակարգչային շարվածքով, sylfaen կամ ghea grapalat տառատեսակով, ստորագրված),
- 2 լուսանկար (3×4 չափի),
- զինվորական ծառայության առնչության վերաբերյալ փաստաթուղթը և պատճեն (առկայության դեպքում),
- հրատարակված գիտական աշխատանքների ցուցակը (առկայության դեպքում),
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված հատուկ արտոնություններից օգտվելու մասին փաստաթուղթը և պատճեն I և II կարգի հաշմանդամության վերաբերյալ տեղեկանք, մինչև 23 տարեկան երկկողմանի ծնողազուրկ, զոհված զինծառայողի երեխա լինելու մասին փաստաթղթեր,
- Ընդունելության ծառայությունների համար սահմանված 2000 դրամի վճարի անդորրագիր:

Տվյալ մասնագիտության որակավորում չունեցող դիմորդների հետ անցկացվում է նաև հարցազրույց-քննություն՝ համապատասխան առարկաներից: Դիմորդների հրամանագրումը առկա համակարգում կատարվում է մինչև ս/թ. սեպտեմբերի 30-ը, հեռակա համակարգում՝ մինչև ս/թ. հոկտեմբերի 10-ը՝ ուսման վարձի առնվազն ամսական չափաբաժինը վճարելուց հետո: Հարցերի և խորհրդատվության համար կարող եք դիմել ԳՊՀ ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղար Ա. Գալստյանին (հեռ.՝ 098-19-67-14; 077-22-57-27): (www.**gorsu.am**)

ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ 2021/22 ՈՒՍՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԸ

Դասիչը / Մասնագիտությունը	Դասիչը / Կրթական ծրագիրը	Բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառմամբ /վճարովի/	Ուսման վարձի չափը /հազար դրամ/
Իրավագիտություն / 042101.00.7	Իրավագիտութուն 042.101.01.7	20	450
Մասնագիտական մանկավարժություն / 011401.00.7	Քիմիա 011.401.02.7	10	280
Հատուկ մանկավարժություն 011302.00.7	Հատուկ մանկավարժություն / 011302.05.7	15	350
Սոցիալական մանկավարժություն 011301.00.7	Սոցիալական մանկավարժություն 011301.03.7	15	350
Տնտեսագիտութուն 031101.00.7	Ձեռնարկությունների տնտեսագիտություն 031101.03.7	20	420
Կառավարում 041301.00.7	Կառավարում 041301.01.7	20	420

Որ չընդհատվի կապը հայրենի գյուղի հետ

Օգոստոսի 31-ին Գորիսի տարածաշրջանի Խնձորեսկի միջնակարգ դպրոցում տեղի ունեցավ յուրօրինակ մի իրադարձություն: Գործարար Սենիկ Ջուլհակյանի երեք զավակները կրթօջախի իրենց տարեկիցներին նվերներ հանձնեցին. ավագ դուստրը՝ նոթբուք, մյուս երկուսը՝ պլանշետներ: Սենիկ Ջուլհակյանն այսպես է մեկնաբանում քայլը. *«Դասում ապրող մատաղ սերունդն իրենց ծնողների ծննդավայրի հետ կապը չպիտի խզի: Սրանով նաև ուժ, եռանդ, ոգևորություն ենք հաղորդում գյուղաբնակ երեխաներին»:*

«Մամ, բա մեր պապան ե՞րբ է գալու», - ասում է զոհվածի երեքամյա որդին՝ Տաշտունում հուշաքարը բացելու արարողության ժամանակ

Սկիզբը՝ էջ 1

նաև Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատի տնօրեն Անդրեյ Սինյակովին:

Մինչ արարողությունը սկսվելը զրուցում ենք զոհվածների հարազատների հետ: Որդի կորցրած Համլետ Հարությունյանի հայրը նահատակվել է Մեծ հայրենականում 1942 թվականին: Երեք տարեկան էր, երբ հայրը մեկնեց ռազմաճակատ: Մերօրյա կռվում էլ՝ 2021 թ. հոկտեմբերի 22-ին, իր Անդո զավակն անօդաչուի հարվածից զոհվեց: Հիմա նրա որդին է երեք տարեկան: Շատ տխուր զուգադիպություն...

Ի դեպ, գյուղի գեղատեսիլ մի անկյունում հուշաղբյուր է կառուցվել Անդո Հայրապետյանի հիշատակին, որտեղ նույնպես եղանք և հարգանքի տուրք մատուցեցինք:

81-ամյա Սերժիկ Ծատրյանն այս պատերազմում կորցրեց (չորս տղա ունի) իր կրտսեր որդուն՝ Անդրանիկին, ով երկու դուստր ունի: Որդեկորույս հայրն ասում է, որ Անդրանիկը տան միակ կերակրողն էր: Եվ փաստն այնքան տխրեցնող է, որ մեր զրույցն ակամա ընդհատվում է...

...Մարդիկ սպասման մեջ են. զսպված հուզմունքը վերածվում է հեկեկոցի, երբ հուշաքարը պարուրող սավանը ցած է սահում: Հնչում են հրազենային համազարկեր...

Մարմարյա քարին փորագրված է 44-օրյա պատերազմի նահատակ 22 մեղրեցիների անունները:

Մեղրիի տարածաշրջանի հոգևոր հովիվ տեր Ռաֆայել քահանա Խաչիկյանն օրհնում է խաչքարը և հոգեհանգստյան պաշտոն կատարում: Նաև արտասանում է ընկածների անունները՝ հավելելով, որ նրանք զոհվեցին վասն հավատո և վասն հայրենյաց: Տեր Ռաֆայելն իր խոսքում, մասնավորապես, այն փաստն ընդգծեց, որ չկա ավելի մեծ նվիրվածություն, քան երբ մեկն իր կյանքը զոհաբերում է դիմացինի համար: Նրանք իրենց կյանքը զոհաբերեցին հայրենիքի և մեզանից յուրաքանչյուրի համար: Ուրեմն թող անմար լինի նրանց հիշատակը...

Սգո արարողության մասնակիցները ծաղիկներ են խոնարհում հուշաքարի պատվանդանին, համբուրում զոհվածների դիմանկարները...

«Մամ, բա մեր պապան ե՞րբ է գալու», – զոհվածի կին Մելինեի գրկում փոքրիկի հարցը լսողներիս սիրտը կտոր-կտոր է անում...



* * *

Ահա և Արցախյան երրորդ պատերազմում նահատակված մեղրեցիների անունազգանունները, որոնց լուսանկարները տեղադրված են հուշակոթողին՝

Ծատրյան Անդրանիկ, Հարությունյան Անդրանիկ, Հովհաննիսյան Արսեն, Ղուկասյան Տիգրան, Մաթևոսյան Ժիրայր, Սիմոնյան Արմեն, Մաթևոսյան Դավիթ, Բեկլարյան Մակար, Շաքարյան Անդրանիկ, Խաչատրյան Ալբերտ, Խաչատրյան Ջիվան, Համբարձումյան Սուրեն, Հայրապետյան Արմեն, Հայրապետյան Տիգրան, Միրզոյան Կարեն, Մկրտչյան Հայկ, Մկրտչյան Վազգեն, Մնացականյան Սպարտակ, Սարգսյան Սուրեն, Սարգսյան Նարեկ, Բաղդասարյան Արմեն, Ազիզյան Արտաշես:

* * *

Տաշտունը մարզկենտրոնից հեռու է 60, Մեղրի քաղաքից՝ 25 կիլոմետր, բարձրությունը ծովի մակերևույթից 1950 մետր է, կարգավիճակը՝ սահմանամերձ և բարձր լեռնային: Տաշտունը հիշատակվում է Սյունյաց տան պատմիչ Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմություն» աշխատության մեջ, ավելի ստույգ՝ Տաթևի վանքին հարկատու գյուղերի ցանկում: Արևիք գավառում ընդգրկված գյուղը Տաթևի վանքին վճարում էր 12 միավոր հարկ:

Ուշ միջնադարում Տաշտունը եղել է գրչության կենտրոն: Տաշտուն է անվանվել (Դաշտոն ձևով) Սյունիք նահանգի Արևիք գավառի մի մասը: Գյուղում պահպանվել է քառամույթ գմբեթավոր բազիլիկ Սբ Ստեփանոս եկեղեցին: Եկեղեցու ներսում ցուցանակ է փակցված (վաղուց արդեն խունացած), որ վկայում է, թե հուշարձանը պահպանվում է պետության կողմից. կառուցված է 10-րդ դարում, վերակառուցված՝ 17-րդ դարերում:

Գյուղի կենտրոնում վեր է խոյանում երկրորդ աշխարհամարտում զոհված տաշտունցիների հիշատակը հավերժացնող հուշարձանը: Տեղեկացանք, որ Մեծ հայրենականում զոհվել է 70-ից ավելի տաշտունցի, որոնց անունները փորագրված են հուշակոթողին: Թող հավերժ լինի նրանց հիշատակը...

Ամենատխուրը՝ մերօրյա կյանքին առնչվող, որ իմացանք Տաշտունում, այն էր, որ երկու տարի առաջ փակվել է գյուղի դպրոցը: Վերջին ուստարում երկու աշակերտ է ունեցել կրթօջախը, մինչդեռ, ինչպես տեղեկացրեց մեր զրուցակիցը, ժամանակին 120 աշակերտ էր սովորում այդ դպրոցում: Ակամա հիշում ես ժամանակների քննությունը բռնած ճշմարտությունը՝ գյուղը դպրոցով է կանգուն...

Հ.Գ. Ի հիշատակ նահատակների, հավատ արարողության, գյուղի հանդիսությունների սրահում կազմակերպվեց սիրո և համերաշխության ճաշ:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Սյունյաց Երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:

Գլխավոր խմբագիր՝ **ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում:

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է: Ⓡ նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1030, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 09.09.2021թ.: